ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«28» Մարտ 2024թ.

ՀՐԱՄԱՆ N 178-Հ

«ՖԼԱՅՈՒԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշմամբ հաստատված հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի N 1006-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի հունվարի 24-ի N 24-Ա հրամանը և «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2024 թվականի մարտի 22-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFM/-Երևան/UDYZ/ երթուղով՝

2024 թվականի մարտի 31-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 26-ը՝ շաբաթական 7 (յոթ) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի հունվարի 24-ի N 24-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFM/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) ամառային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2024 թվականի մարտի 31-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 26-ը՝ շաբաթական 7 (յոթ) չվերթ հաճախականությամբ, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշմամբ հաստատված հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին, և որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի հունվարի 24-ի N 24-Ա հրամանի 1-ին կետով նախատեսված արտոնությունը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

Recoverable Signature

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 001/2024
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 001/2024
TO THE AIRCRAFT OPERATOR OF REPUBLIC OF ARMENIA FOR TWO AND MORE CHARTER SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Ֆլայուան Արմենիա» ՍՊԸ "Flyone Armenia" LLC
Պատվիրատուն Charterer	«Ֆլայուան Արմենիա» ՍՊԸ "Flyone Armenia" LLC
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A319, A320
Հաճախականությունը Frequency	շաբաթական 7 չվերթ 7 flights per week
Երթուղին Air route	Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFM/-Երևան/UDYZ/ Yerevan/UDYZ/-Istanbul/LTFM/-Yerevan/UDYZ/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	31/03/2024 մինչև 26/10/2024 31/03/2024 till 26/10/2024

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF THE CIVIL AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

Recognizable signature

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

28.03.2024

(տալու ամսաթիվը)
(date of issue)